600.0020.23.05.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2001 թվականի №20
ք. Երևան

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 14 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «դ» կետը, 17-րդ հոդվածի «է» կետը և ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 10-ի №14 որոշումը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկդրույք սակագնային համակարգում էլեկտրաէներգիայի՝ արտադրող-մեծածախ գնորդ-վաճառող պայմանագրի օրինակելի ձևում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

ա) «Պայմանագրում օգտագործված հասկացությունները» գլուխը լրացնել հետևյալ հասկացություններով.

«հզորության տաք (պտտվող) պահուստ՝ պահուստային հզորություն, որը կարող է գործարկվել կայանի բեռնվածքն արագ (մի քանի րոպեում) բարձրացնելու համար.

հզորության սառը պահուստ՝ ցանցին չմիացած ագրեգատի հզորությունը, որի գործարկման համար անհրաժեշտ է տասնյակ րոպեներից մինչև մի քանի ժամ տևողությամբ ժամանակահատված.

հաղորդող՝ էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման (փոխադրման) գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

բաշխող՝ էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

հաշվարկային օր՝ 24 ժամանոց ժամանակահատված, որի գործողությունն սկսվում է տվյալ օրվա ժամը 11^{00}-ին և ավարտվում է հաջորդ օրվա ժամը 11^{00} -ին:

հաշվարկային ամիս՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11^{00}-ին և ավարտվում է հաջորդ օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11^{00} -ին.

հաշվարկային տարի՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային տարվա առաջին ամսվա առաջին օրվա ժամը 11^{00}-ին և ավարտվում է հաջորդ օրացուցային տարվա առաջին ամսվա առաջին օրվա ժամը 11^{00}-ին».

բ) 3.2 կետի 1-ին նախադասությունը փոխարինել «Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի Կողմերն իրավասու են սահմանել հանձնաժողովի սահմանածից ավելի ցածր սակագին:» նախադասությամբ.

գ) 4.1.3 կետի 2-րդ նախադասության մեջ «Նշված ժամանակահատվածում» բառերից հետո ավելացնել «առևտրային» բառը.

դ) 5.1 կետի 2-րդ պարբերության 2-րդ նախադասության մեջ «Էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորստի» բառերը փոխարինել «Էլեկտրաէներգիայի տեխնիկական կորստի» բառերով.

ե) 5.6 կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասությունում «պատրաստականության ամսական ստուգումները» բառերը փոխարինել «տվյալ հաշվարկային ամսվա ընթացքում կատարել պատրաստականության ամսական ստուգումներ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ. ՄՈՎՍԵՍՅԱՆ**